ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 27-Լ

«09» 02 2024թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ի N 2-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 25-ի N 39 հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 9-ի N 2-Լ հրամանի (այսուհետ՝ Հրաման)՝

1) վերնագրում «սեպտեմբերի 25-ի» բառերը փոխարինել «սեպտեմբերի 24-ի» բառերով.

2) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունը միաձուլել՝ ստեղծելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն:».

3) Հրամանի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության

վարչությանն աջակցող բաժինը և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանն աջակցող բաժինը միաձուլել՝ ստեղծելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանն աջակցող բաժին:».

4) Հրամանի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Ուժը կորցրած ճանաչել Հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը:»:

5) Հրամանի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Ուժը կորցրած ճանաչել Հավելվածի 33-րդ կետի 19-րդ ենթակետը:»:

6) Հրամանը լրացնել նոր՝ 6.1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6.1. Հավելվածի 33-րդ կետը լրացնել նոր 19.1-ին ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«19.1) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանն աջակցող բաժին.»»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3.Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազին, Երևան քաղաքի դատախազին, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, մարզերի, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԱԿ. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ